Doi: 10.56737/2953-7843-2025.04-70

ՄԱՆԵ ԿՈՆԻՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՀԲԸՄ ԿԱՀԻՐԵԻ ԿԱՌՈՒՅՑԻ ՑՈՒՅՑԱԲԵՐԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՊՈՐՏ ՍԱՅԻԴՈՒՄ ԱՊԱՍՏԱՆԱԾ ԱՐԵՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ 1915–1918 ԹԹ.[1]

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ի. դարասկզբի թուրքական վարչակարգի որդեգրած ցեղասպան քաղաքականությունն աղետալի հետեւանքներ ունեցավ արեւմտահայության համար։ Դրանք համատարած էին՝ հայրենիքի եւ ունեցվածքի կորուստ, ինքնության փոխակերպում եւ մշակութային ժառանգության ոչնչացում։ Հայոց ցեղասպանության ծանր հետեւանքներից էր հայ ազգի ինքնության փոխակերպումը, ինչի հետեւանքով արեւմտահայության ճնշող մեծամասնությունը դարձավ այդ հրեշավոր քաղաքականության զոհը։ Հազարավոր արեւմտահայեր՝ հատկապես կանայք եւ երեխաներ, որոնք ցեղասպան քաղաքականության հետեւանքով կորցրին իրենց հայրենիքը, հայրենի ակութները, դարձան որբ ու գաղթական։ Հայ որբերին ու գաղթականներին պատսպարելու, հոգ տանելու խնդիրը, ցեղասպանության հետեւանքով վերջիններիս խախտված իրավունքների արձանագրումն ու հաղթահարման փորձերը դարձան ոչ միայն որոշ միջազգային[2], այլեւ հայկական բարեգործական կազմակերպությունների հոգածության խնդիրը։ Այդ դժվարին պայմաններում հայ գաղթականներին աջակցելու եւ նրանց կյանքի բարելավման ուղղությամբ լուրջ քայլեր ձեռնարկելու գործում առանձնահատուկ դեր խաղաց Հայ բարեգործական ընդհանուր միությունը (այսուհետ՝ ՀԲԸՄ)։

Չնայած Առաջին աշխարհամարտը եւ հայերի զանգվածային ջարդե-

---

[1]* *Ստացվել է՝ 15.04.2025, գրախոսվել է՝ 9.06.2025։ էլ. հասցե՝* koninyan.mane@yandex.com:

[2] *Արեւմտահայ գաղթականությանը մեծ օգնություն ցուցաբերած միջազգային բարեգործական կազմակերպություններից էին «Ամերիկյան Մերձավոր Արեւելքի նպաստամատույց», «Հայ գաղթականների (Լորդ քաղաքագլխի) հիմնադրամը», «Դոլչի հիմնադրամը» եւ այլն, որոնք որբանոցներ բացելուն զուգահեռ մեծածավալ օգնություն են ցուցաբերել նաեւ արեւմտահայ գաղթականությանը։*

ը մեծ վնաս պատճառեցին նաեւ ՀԲԸՄ կառույցին, որի շուրջ 80 մասնաճյուղեր՝ մեծ մասամբ Բալկաններում եւ Օսմանյան կայսրությունում, ավելի քան 5000 անդամներով քայքայվեցին, բայց «բարեբախտաբար Ամերիկայի եւ Եգիպտոսի մէջ Միութեան վարիչները եւ անդամները, կրկնապատկելով իրենց ջանքերը եւ զոհողութիւնները, հազուագիւտ անձնուիրութեամբ մը կրցան մասամբ լցնել պակասը եւ հնարաւոր ընծայել օգնութեան գործը ուր որ կարելի էր եւ անհրաժեշտ»[3]։ Արձագանքելով ստեղծված նոր մարտահրավերներին՝ հատկապես Կահիրեի ՀԲԸՄ մեծածավալ օգնություն ցուցաբերեց ցեղասպանությունից փրկված հազարավոր հայ որբերի ու գաղթականների՝ ոչ միայն կեցության ու սննդի հարցերը հոգալով, այլեւ սրտացավ մոտեցում ցուցաբերելով կրթության եւ առողջապահության ոլորտներում՝ նպատակ ունենալով ապահովել գաղթական երեխաների բնականոն զարգացումը։

ՀԲԸՄ ԿԱՀԻՐԵԻ ԿԱՌՈՒՅՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Կահիրեի ՀԲԸ միությունը, որ զգալի օժանդակություն էր ցուցաբերել դեռեւս 1909 թ.՝ Կիլիկիո հայոց ջարդերի ժամանակ, Հայոց ցեղասպանության շրջանում ոչ միայն շարունակեց իր մարդասիրական առաքելությունը, այլեւ պարբերաբար ընդլայնեց գործունեության շրջանակները։ Առաջին աշխարհամարտի տարիներին Կահիրեի ՀԲԸՄ-ն իր գործունեությունը կենտրոնացրել էր Այսրկովկասում, Միջագետքում եւ Եգիպտոսում։ Նա սկսեց իրականացնել համալիր գործողություններ՝ հոգալով բռնի տեղահանության հետեւանքով հուսալքված հայ գաղթականների կարիքները՝ զբաղվելով սննդի, հագուստի, դեղորայքի, վրանների մատակարարմամբ։ Այդ կապակցությամբ 1915 թ. մարտի 5-ին Պողոս Նուբարի գլխավորությամբ ՀԲԸՄ-ն ստեղծեց «Ազգային շահերի պաշտպանութեան կենտրոնական վարչութիւն» հիմնադրամը, որը պետք է հանգանակություն կազմակերպեր՝ ի նպաստ ցեղասպանության հետեւանքով Այսրկովկաս գաղթած արեւմտահայության։ ՀԲԸՄ «Միութիւն» պաշտոնաթերթից տեղեկանում ենք, որ այդ նույն շրջանում Այսրկովկաս է առաքվել ավելի քան 64 հազար ռուբլի (6200 եգիպտական ոսկի) օգնություն, որից 20 հազարը՝

---

[3] *Տե՛ս «Ոսկեմատեան Հայկական բարեգործական ընդհանուր միութեան 1906–1931», հտ. Ա., Բարիզ, էջ 19։*

Թիֆլիսի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսեսյանին, իսկ մնացածը էջմիածին՝ կաթողիկոս Գեւորգ Ե. Սուրենյանցին։ Այդ նույն շրջանում ՀԲԸՄ Լոնդոնի եւ Մանչեստրի մասնաճյուղերը եւս ցուցաբերում են օգնություն, ինչի առթիվ իրենց ձեռնարկած հանգանակության մասին ծանուցում են Ամենայն Հայոց կաթողիկոս Գեւորգ Ե. Սուրենյանցին. «Լոնտօնէն Վեհ. Կաթողիկոսին ղրկուած է 4200, իսկ Մանչեսթրէն՝ 500 անգլ. ոսկի»[4]։ Հետագայում այդ օգնությունները դարձան պարբերական՝ գրեթե ամենամյա։ Կահիրեի ՀԲԸՄ հանգանակություններին մասնակից դարձնելու համար էր նաեւ, որ «Միություն» պաշտոնաթերթի միջոցով փորձում էր համայն հայությանն իրազեկել Արեւմտյան Հայաստանում եւ Օսմանյան կայսրության հայաբնակ տարածքներում արեւմտահայության զանգվածային ջարդերին. «Անդի՛ն, անիծապարտ Տաճկաստանի ոճրասուն արիւնոռոգ հողին վրայ, մեր քամբախտ հայրենակիցները գեհենական տանջանքներու մէջ կը մարտիրոսանան, անօթութենէ կը մեռնին, ջարդէ կը մեռնին....»[5]։ Չնայած, որ ընթացող պատերազմը գրեթե անհնարին էր դարձրել արեւմտահայ գաղթականությանը ցուցաբերվող ցանկացած օգնություն, այնուամենայնիվ, «Ազգային շահերի պաշտպանության կենտրոնական վարչության» հանգանակության շնորհիվ ՀԲԸՄ-ն կարողացավ ոչ միայն օգնություն ցուցաբերել Այսրկովկասի գաղթականությանը, այլեւ որոշակի բաժին հատկացրեց նաեւ Արեւմտյան Հայաստանի մի շարք գավառներում։ 1915 թ. մարտ-ապրիլ ամիսների ընթացքում ՀԲԸՄ-ն Կ. Պոլսի իր մասնաճյուղի միջոցով կարողացավ 100 օսմանյան ոսկի գումար արժողության օգնություն ուղարկել Կարնո (Էրզրումի) շրջակայքի հայ գաղթականությանը[6], 50 օսմանյան ոսկի՝ Երզնկայի գաղթականությանը[7]։ Լրագրական թղթակցություններից պարզ է դառնում, որ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը եւ ՀԲԸՄ Կ. Պոլսի մասնաճյուղը 1915 թ. ընթացքում շուրջ 5500 օսմանյան ոսկի արժողությամբ գումար են ուղարկել տարբեր գավառներ[8]։

Ծայրաստիճան թշվառություն ու մահվան սարսափ տեսած արեւմտահայ գաղթականներին տեղահանության առաջին օրերից սկսած՝ մեծ

---

[4] Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1915, մարտ, թիւ 39։
[5] Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1915, յունիս, թիւ 42։
[6] Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1915, մարտ, թիւ 39։
[7] Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1915, ապրիլ, թիւ 40։
[8] Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1915, նոյեմբեր, թիւ 47։

օգնություն ցուցաբերեց ՀԲԸՄ Նյու Յորքի մասնաճյուղը՝ Միջագետքում հյուպատոսական ծառայությունների կամ ամերիկյան մարդասիրական կազմակերպությունների միջոցով։ Հալեպում առաջնորդական փոխանորդ տեր Հարություն քահանա Եսայանի նախագահությամբ կազմավորված «Գաղթականների օգնության հանձնախմբին» մեծ օժանդակություն ցուցաբերեց ՀԲԸՄ Հալեպի մասնաճյուղը՝ Ա. Մազլումյանի նախագահությամբ[9]։

ՊՈՐՏ ՍԱՅԻԴԻ ԳԱՂԹԱԿԱՅԱՆԸ ԵՒ ՀԲԸՄ ԿԱՀԻՐԵԻ ԿԱՌՈՒՅՑԻ ՅՈՒՅԱԲԵՐԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Կահիրեի ՀԲԸՄ գործունեությունը հիմնականում կենտրոնացավ Պորտ Սայիդ ժամանած մուսալեռցիներին ցուցաբերվող օգնության վրա։ Պորտ Սայիդ ժամանելուն պես՝ ՀԲԸՄ «200 ոսկի առաջին վարկ մը քուէարկեց բժշկական օգնութիւն հասցնելու նպատակաւ, եւ գործադրութեան համար պաշտօն տուաւ Միութեան պատուակալ բժիշկ Տօքթ. Պ. Սերովբեանին անմիջապէս Բօր-Սայիտ երթալ եւ սանիտարական գործը կազմակերպել տեղւոյն վրայ»[10]։ Դա տեղի չունեցավ, քանի որ տեղական կառավարության, ամերիկյան Կարմիր խաչի եւ հատկապես եգիպտահայ Կարմիր խաչի միջոցով, որը «առողջապահական գործին եւ անոր յանձանձումին մէջ շատ պատուաւոր ու գործօն բաժին մը ունեցած է»[11], մուսալեռցիներին արդեն տրվել էր որոշակի օգնություն՝ դեղորայքի, սննդի, ապաստարանի տեսքով, ուստի ՀԲԸՄ կենտրոնական վարչությունը, տեղի տալով եգիպտահայ թեմի առաջնորդ Թորգոմ Արք. Գուշակյանի առաջարկին, զբաղվեց մուսալեռցի երեխաների կրթական հարցերով։ Կահիրեի ՀԲԸՄ հիմնական նպատակը դարձավ որբախնամ գործունեությունը՝ մասնավորապես նրանց հոգատարությունը, կրթությունը, առողջության ապահովումը։ 1915 թ. հոկտեմբերի 20-ին Պորտ

---

[9] *Մազլումյան ընտանիքը Հալեպի երեւելի ընտանիքներից էր, Հայտնի էր «Բարոն» հյուրանոցով։ Նրանք մեծ օգնություն են ցուցաբերել շատ գաղթականների, փրկել են նաեւ ցեղասպանության ականատես Արամ Անտոնյանի կյանքը՝ աշխատանքի ընդունելով «Բարոն» հյուրանոցում։*

[10] *Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1915, սեպտեմբեր, թիւ 45։*

[11] *Տե՛ս* Ա. Սալբի, *Ալեակներ եւ խլեակներ, հայ վրանաքաղաքին տարեգիրքը, Աղեքսանդրիա, Ս. Գասապեան տպագր., 1920, էջ 151։*

Սայիդի մոտակայքում, ուր հիմնվել էր մուսալեռցիների վրանային ավանը, տեղի ունեցավ ՀԲԸՄ «Սիսուան» վարժարանի հանդիսավոր բացումը, որտեղ 25 վրան-դասարաններում սովորում էին շուրջ 1222 աշակերտներ՝ «գրեթէ բոլորն ալ անուս եւ շատերը նոյն իսկ մայրենի լեզուին անգիտակ, թրքախօս կամ արաբախօս, բաւարար ուսում առին եւ տոհմային կրթութեամբ դաստիարակուեցան»[12]։ Պորտ Սայիդի վրանաքաղաքի բժիշկ Արամ Սահակյանը (Սալբի), որ 1918 թ. ստանձնում է եգիպտահայ Կարմիր խաչի բժշկի պաշտոնը, բարձր գնահատելով Կահիրեի ՀԲԸՄ-ի գործունեությունը, նշում է, որ ազգն իր զավակների հանդեպ չուշացրեց իր գուրգուրոտ վերաբերմունքը եւ բացեց «Սիսուան» վարժարանը՝ «աղճատուած գաւառաբարբառէ մը զատ ոչինչ գիտցող այս փոքրիկներուն մէկ մեծ պակասը լրացնելու»[13]։

Վարժարանի սկզբնական ծախսերի համար ՀԲԸՄ-ի նախագահ Պողոս Նուբարը փոխանցեց 1250 ֆրանկ գումար[14]։ Կահիրեի ՀԲԸՄ ջանքերով հաճախակի դարձած հանգանակություններից լուծվում էին ոչ միայն վարժարանի կրթական, այլ նաեւ սաների զգեստավորման հարցերը։ Սիսուան վարժարանը շարունակեց գործել մինչեւ 1919 թ. նոյեմբեր ամիսը, երբ վրանաքաղաքի գաղթականները, ստանալով անգլիական եւ ֆրանսիական զինվորական իշխանությունների աջակցությունը, տեղափոխվեցին իրենց ծննդավայրերը՝ մասնավորապես Կիլիկիա։ 1915 թ. հոկտեմբերից մինչեւ 1919 թ. նոյեմբեր ընկած ժամանակահատվածում Սիսուան վարժարանի ընդհանուր ծախսերը՝ ըստ ՀԲԸՄ տեղեկագրերի, կազմել են 7 626 755 եգիպտական ոսկի՝ «առանց հաշուելու Միութեան Կեդր. Հանդերձարանի մթերանոցներէն ձրիաբար հայթայթուած հանդերձեղէնները»[15]։

Կահիրեի ՀԲԸՄ կրթականից զատ կարեւոր տեղ էր հատկացնում որբերի տարատեսակ արհեստների մեջ հմտանալու կարողությանը։ Դա արվում էր այն պարզ պատճառով, որ հետագայում՝ որբանոցից դուրս գալուց հետո, նրանք կարողանային հոգալ իրենց կեցությունը եւ անկախ

---

[12] *Տե՛ս «Հայկական Բարեգործական Ընդհ. Միութիւն, հաշուեկշիռ եւ տեղեկագիր 11-րդ, 12-րդ, 13-րդ եւ 14-րդ շրջաններու, 1916–1919», Գահիրէ, Հ.Բ.Ը. Միութեան տպ., 1920, էջ 108։*

[13] *Տե՛ս* Ա. Սալբի, *նշ. աշխ., էջ 181։*

[14] *Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1915, նոյեմբեր, թիւ 47։*

[15] *Տե՛ս «Հայկական Բարեգործական Ընդհ. Միութիւն, հաշուեկշիռ եւ տեղեկագիր...», էջ 110։*

լինել։ ՀԲԸՄ անդամները համոզված էին, որ տարատեսակ հմտություններ ձեռք բերելը կնպաստեր որբերի ընկերային ներգրավվածությանը։ Այդ կապակցությամբ «Սիսուան» վարժարանին կից ՀԲԸՄ բացեց արհեստանոց՝ «չափահաս տղոց ատաղձագործութիւն, կօշկակարութիւն եւ դերձակութիւն սովորեցնելու համար»[16]։

Հարկ է նշել, որ Առաջին աշխարհամարտի տարիներին՝ անմիջապես ցեղասպանության գործադրման շրջանում, Հայոց ցեղասպանության դատապարտման գործընթացը դարձել էր Կահիրեի ՀԲԸՄ-ի առանցքային խնդիրներից մեկը։ 1916 թ. վերջերին, ստանալով նաեւ Ազգային պատվիրակության հավանությունը, ՀԲԸՄ կազմեց «Ազգային պրոպագանդի դիւանը»՝ նպատակ ունենալով հավաքել, թարգմանել ու տպագրել Հայոց ցեղասպանությանն առնչվող եւ Եգիպտոսում պարբերաբար հրատարակված փաստաթղթեր, գրքույկներ, հոդվածներ, նամակներ, տարբեր արժանահավատ վկայություններ, որոնք կհանձնվեին Ազգային պատվիրակության տնօրինությանը՝ «ծառայելու համար ազգային դատին»[17]։ Դրանով պայմանավորված՝ այդ կառույցին անդամագրվեցին նաեւ Եգիպտոսի օտար մամուլի մի շարք հայասեր ներկայացուցիչներ, որոնք իրենց նպաստը կբերեին փաստահավաք այդ աշխատանքներին։ Այդ դիվանի գործունեության արդյունքում հրատարակվեցին այնպիսի կարեւոր աշխատություններ, ինչպիսիք էին Ֆայեզ-էլ-Ղոսեյնի «Les Masacres en Armenie», *Կիլիկիայի ֆրանսիացի կառավարիչ գնդապետ Բրեմոնի* «Notes Historiques et Geographiques sur L'Armenie», *Թ. Մկրտիչեանի «Տիգրանակերտին նահանգին ջարդերը եւ քիւրտերու գազանութիւնները» եւ այլ գործեր, որոնք Հայոց ցեղասպանության դատապարտման գործում կարեւոր սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող աշխատություններ են։*

1917 թ. վերջերից սկսած, երբ դաշնակից ուժերը հետզհետե ազատագրեցին Միջագետքի տարածքները, Կահիրեի ՀԲԸՄ առաջիններից էր, որ օգնության ձեռք մեկնեց ազատագրված տարածքների տարաբախտ գաղթականությանը՝ լավ հասկանալով, որ անհետաձգելի օգնություն էր անհրաժեշտ նրանց կեցության նվազագույն պայմանների

---

[16] *Տե՛ս* Ա. Սաւբի, *նշ. աշխ., էջ 169։*

[17] *Տե՛ս «Հայկական Բարեգործական Ընդհ. Միութիւն, հաշուեկշիռ եւ տեղեկագիր...», էջ 103։*

ապահովման համար։ Օգնության գործը կազմակերպելու համար ՀԲԸՄ կապեր էր հաստատել անգլո-ֆրանսիական զինվորական իշխանությունների ներկայացուցիչների հետ, քանի որ «Միութեան օգնութիւնը՝ սնունդ եւ հանդերձանք, կարելի եղաւ այս ձեւով հասցնել Աքապա՝ բրիտանական բանակի հասցէին՝ հայ աղէտեալներուն բաժնուելու համար»[18]։ Կիլիկիայի ֆրանսիացի կառավարիչ գնդապետ Բրեմոնը, առաջ քաշելով Ֆրանսիայի հայամետ դիրքորոշումը, հայտարարում էր, որ «սիրայօժար պիտի աջակցէր, տրուած ըլլալով, որ հայ որբերը կը կազմէին ազգին ապագան»[19]։ Նաեւ դաշնակիցների տված խոստումներից ոգեւորված՝ ՀԲԸՄ փորձում էր առավելագույնի հասցնել հանգանակությունների կազմակերպումը։ 1917 թ. սկսած՝ գաղթականությանն ուղղված նպաստների բաշխումը կազմակերպելու համար ՀԲԸՄ ստեղծեց Տարագրյալների, Որբանպաստի, Հանդերձարանի հիմնադրամները։ Տարագրյալների հիմնադրամը հոգում էր գաղթականներին անհրաժեշտ կարիքները։ 1917–1919 թթ. ընթացքում այս հիմնադրամը հանգանակեց շուրջ 24 193 եգ. ոսկու չափով գումար։ Որբանպաստ հիմնադրամը, «որ կը գոյանայ որբերու պաշտպանութեան տարեվճարներով, որբանպաստ նուիրատուութիւններով, եւ որ կը ծառայէ, նախընտրապէս, մատակարարելու Միութեան սեփական որբանոցները եւ, առհասարակ, սատարելու որբախնամ գործին», 1918–1919 թթ. ընթացքում հանգանակեց շուրջ 26 200 եգ. ոսկու չափ գումար[20]։ Հանդերձարանի հիմնադրամը հոգում էր ոչ միայն ՀԲԸՄ որբանոցներին անհրաժեշտ հանդերձանքի հարցերը, այլ նաեւ մեծաքանակ հագուստ էր առաքում Պորտ Սայիդի, Սիրիայի ու Պաղեստինի հայ գաղթականներին։ Իր ստեղծման պահից մինչեւ 1918 թ. նոյեմբեր ամիսը ներառյալ այս հիմնադրամն ավելի քան 32 281 կտոր նոր զգեստ է ուղարկել վերոհիշյալ շրջանների հայ գաղթականներին։ ՀԲԸՄ տեղեկագրերից իմանում ենք, որ վերջինիս բաշխած նպաստների հանրագումարը 1917 թ. կազմել է շուրջ 7 395 206 եգ. ոսկի, իսկ 1918 թ.՝ 18 784 306 եգ. ոսկի[21]։

---

[18] *Տե՛ս «Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան», հտ. Ա., 1906–1940, Գահիրէ–Փարիզ–Նիւ Եորք, 2006, էջ 50։*

[19] *Տե՛ս «Հայաստանի կոչնակ», Նիւ Եորք, 1949, յունուար 29, թիւ 5։*

[20] *Տե՛ս «Հայկական Բարեգործական Ընդհ. Միութիւն, հաշուեկշիռ եւ տեղեկագիր...», էջ 92–95։*

[21] *Անդ, էջ 99–102։*

ՀԲԸՄ ԿԱՀԻՐԵԻ ԿԱՌՈՒՅՑԻ ՅՈՒՅԱԲԵՐԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՊՈՐՏ ՍԱՅԻԴԻ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՄՈՒԴՐՈՍԻ ԶԻՆԱԴԱԴԱՐԻՑ ՀԵՏՈ

Մուդրոսի զինադադարից հետո, երբ տարագիր հայերն անարգել կարող էին վերադառնալ իրենց ծննդավայրերը, ՀԲԸՄ առաջիններից էր, որ ձեռք մեկնեց հայ գաղթականությանը՝ լծվելով լայնածավալ մարդասիրական աշխատանքի։ ՀԲԸՄ Կենտրոնական վարչական ժողովը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ. Խապայանին ուղղված 1918 թ. նոյեմբեր 12 թվակիր նամակում հայտնում էր հայ գաղթականությանն օգնելու իր պատրաստակամությունը. «ՀԲԸՄ արդէն ի սպաս դրած է իր բարոյական եւ նիւթական բոլոր միջոցները եղբայրական օգնութեան եւ հայրենիքի վերաշինութեան գերազանցապէս նուիրական գործին։ Ձերդ Վեհափառութիւնը վստահ կրնայ ըլլալ, որ Կեդրոնական վարչական ժողովս ըրաւ եւ պիտի ընէ ինչ որ հնարաւոր է աղէտեալներու վիճակը բարելաւելու համար»[22]։ Արդեն դեկտեմբեր ամսի տվյալներով՝ ՀԲԸՄ Սահակ կաթողիկոսին ուղարկում է 1750 եգիպտական ոսկի գումար, 2500 եգիպտական ոսկի արժողությամբ 6 հակ պլանքէթներ (ծածկոց) եւ հանդերձանք[23]։

Զինադադարից հետո, ինչպես հայկական տարբեր բարեգործական կառույցների, այնպես եւ ՀԲԸՄ գլխավոր խնդիրն էր.

ա) գաղթականների վերադարձն իրենց ծննդավայրերը կամ տեղավորումը Հալեպի եւ արաբական աշխարհի տարբեր վայրերում,

բ) որբահավաքը, թուրքերի, քրդերի եւ արաբների մոտ հայտնված հայ կանանց, աղջիկների եւ որբերի ազատագրումը,

գ) որբերի խնամքն ու դաստիարակությունը, կրթական գործի կազմակերպումը

դ) քաղաքական, մշակութային, բարեսիրական կազմակերպությունների վերստեղծումը,

ե) հայերի քաղաքական պահանջների հետապնդումը[24]։

Քանի որ վերոհիշյալ խնդիրները կյանքի կոչելու համար չկար մեկ միասնական մարմին, ուստի զանազան կառույցներ, այդ թվում եւ ՀԲԸՄն,

---

[22] *Տե՛ս* Բ. Եղիազեան, *Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914–1972, Անթիլիաս–Լիբանան, 1975, էջ 80։*

[23] *Անդ։*

[24] *Տե՛ս* Լ. Զորմիսեան, *Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հտ. Գ. (1908–1922), Պէյրութ, տպ. «Սեւան», 1975, էջ 524։*

գիտակցելով, որ այդ խնդիրներից «ամենէն կենսական եւ հրամայողականը կը կազմէր իսլամներու մօտ գտնուող հայ որբերու եւ կիներու ազատագրման պարտադիր, բայց դժուարին գործը»[25], շարունակեց իր մարդասիրական գործունեությունը՝ կենտրոնանալով արեւմտահայության ֆիզիկական ու բարոյահոգեբանական վերակառուցման վրա։ Նա պարբերաբար ընդլայնեց գործունեության շրջանակները՝ նվիրվելով ցեղասպանությունը վերապրածների վերականգնողական աշխատանքներին։ Բարեգործականի կարեւոր գործառույթներից մեկը դարձավ անապատներում թափառող կամ թուրքերի, քրդերի, արաբների մոտ պահվող որբերի փրկությունը, դեռատի հայուհիների ու կանանց ազատագրումը թուրքական հարեմներից։ ՀԲՄ ուշադրության կենտրոնում էին հատկապես որբերը, ուստի պատահական չէր, որ հասույթի մեծ մասը ծախսվում էր որբերի հոգատարության վրա, քանի որ «չէր կրնար այդ եղկելի զոհերը ձգել իրենց բախտին»[26]։ Կարգվեցին որբախույզներ, որոնց գործը եղավ որբահավաքը։ Որբահավաքի հիմնական կենտրոններն էին Կ. Պոլիսը, Սիրիան, Միջագետքը եւ սահմանամերձ թուրքական տարածքները։ Այդ կապակցությամբ ՀԲՄ, Եգիպտահայ նպաստամատույցի եւ Միացյալ որբախնամի որոշմամբ Մկրտիչ Եփրեմյանը, Կարապետ Սեֆերյանը եւ Ռուբեն Հերյանը նշանակվեցին նպաստի պատվիրակներ ու մեկնեցին Սիրիա։ Նրանց նպատակն էր տեղում ծանոթանալ գաղթականության վիճակին՝ այն տեղեկացնելով նպաստաբաշխ մարմիններին[27]։ ՀԲՄ որոշեց յուրաքանչյուր որբի համար սահմանել 12 եգիպտական ոսկի կամ 60 ամերիկյան դոլար նպաստ, բայց քանի որ նվիրաբերած այդ գումարը «որբի մը տարեկան ծախքին հազիւ քառորդը կամ երրորդը կը ներկայացնէ»[28], ուստի շատ կարեւորվում էին անհատների նվիրատվությունները։ ՀԲՄ տեղեկագրերից իմանում ենք, որ որբախնամ կոչերին արձագանքել են հարյուրավոր անհատներ։ Նշենք, որ ՀԲՄ որբախույզ Ռ. Հերյանին ուղղած նամակներում հատուկ շեշտում էր, որ հնարավորության սահմաններում վերջինս նաեւ լուսանկարեր որբերին, քանի որ «իւրաքանչիւր որբապաշտպանի կը յանձնենք իր պաշտպանած որբին լուսանկար-վի-

[25] Անդ։

[26] Տե՛ս «Ոսկեմատեան Հայկական բարեգործական ընդհանուր միութեան...», էջ 20։

[27] Տե՛ս Ն. Մարգարյան, Միջագետքի անապատների հայ որբախույզները (1918–1923 թթ.), «Հայագիտության հարցեր», 2018, № 1, էջ 39–40։

[28] «Հայկական Բարեգործական Ընդհ. Միութիւն, հաշուեկշիռ եւ տեղեկագիր...», էջ 111։

ճակացոյցը»[29]։ Դա բացատրելի էր նվիրատուների հետաքրքրությունը մեծացնելու եւ վերջիններիս վստահություն ներշնչելու հանգամանքով։ Որբախույզների առաքելությունն էր նաեւ Միջագետքի հարեմներից հայ աղջիկների ու կանանց ազատագրումը[30]։

Քանի որ մինչեւ զինադադարը Երուսաղեմը դարձել էր հարյուրավոր հայ գաղթականների ապաստարանը, ուստի ի սկզբանե ՀԲԸՄ որոշել էր իր անդրանիկ որբանոցը բացել Երուսաղեմում։ Բայց ինչ-ինչ հանգամանքների բերումով[31] բրիտանական հրամանատարության պահանջով գաղթականության մեծամասնությունը տեղափոխվեց Պորտ Սայիդ։

ՀԲԸՄ որբախնամ գործունեությանն իր նպաստը բերեց բրիտանական բանակի հրամանատարության եւ ՀԲԸՄ միջեւ ձեռք բերված պայմանավորվածությունը, համաձայն որի՝ բրիտանական բանակի հրամանատար է. Ալենբին պաշտոնական գրությամբ հաղորդում է ՀԲԸՄ կենտրոնական վարչությանը, որ 1918 թ. օգոստոսի 1-ից սկսած՝ բրիտանական կողմն ստանձնելու է ոչ միայն հայ գաղթականության, այլ նաեւ հայ որբերի հոգածությունը[32]։ Այդ օգնության կարիքն իսկապես կար, եթե հաշվի առնենք, որ դեպի Պորտ Սայիդ սկսվել էր գաղթականների հոսքը։ Անհրաժեշտ էին նոր վրաններ, որբանոցի համար նոր շենք, քանի որ որբերի թիվը, գումարած Երուսաղեմի որբերը, հասնում էր շուրջ 300-ի։ Բրիտանական կողմի հետ ունեցած բանակցությունների արդյունքում որոշվեց, որ որբանոցը բացվելու էր հենց Պորտ Սայիդում՝ «տոհմային դաստիարակութեան հիման վրայ»[33]։

1918 թ. սեպտեմբերի 2-ին բրիտանական զինվորական իշխանության հրահանգով Երուսաղեմի շուրջ 166 որբերը, տիկին Վիկտորյա Արշարունու[34] առաջնորդությամբ, փոխադրվեցին Պորտ Սայիդի գաղթակայանը։ Այդ առիթով կարեւոր էր բրիտանական Հայ գաղթականների

---

[29] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 33, թ. 7։

[30] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 33, թ. 1։

[31] ՀԲԸՄ Երուսաղեմում որբանոց բացելու համար արտոնություն խնդրեց բրիտանական զինվորական իշխանությունից, սակայն մերժում ստացավ։ Ըստ երեւույթին՝ դա պայմանավորված էր այդ տարածքում հրեական ազգային օջախ ստեղծելու՝ հրեաների ցանկության հետ, որին տուրք էին տալիս բրիտանացիները։

[32] Տե՛ս «Միութիւն», Գահիրէ, 1918, յուլիս–օգոստոս, թիւ 64։

[33] Անդ։

[34] Վիկտորյա Արշարունին Պորտ Սայիդի հայ գաղթակայանում աշխատել էր անձնվիրությամբ եւ հայտնի էր որպես «որբերի մայրիկ»։

(Լորդ Մեյերս) հիմնադրամի ներկայացուցիչներ Մր. Պլեքհաուզի եւ դր. Քենեդիի այցելությունը Եգիպտոս՝ Երուսաղեմի եւ Սիրիայի հայ գաղթականների վիճակն ու կարիքները տեղում ուսումնասիրելու համար։ Դա նաեւ նոր համագործակցության քայլ էր լինելու ՀԲՄ եւ հիմնադրամի միջեւ։

Որբերն սկզբնական շրջանում տեղավորվեցին «Սիսուան» վարժարանում, բայց նրանց թիվը գնալով այնքան ստվարացավ, որ ՀԲՄ ստիպված էր բացել Պորտ Սայիդի իր անդրանիկ որբանոցը։ Որբերի թիվը հասնում էր շուրջ 300-ի։ Որբանոցի վարժարանը բոլորովին առանձին էր «Սիսուան» վարժարանից։ Դա մի հաստատություն էր, որն իր մեջ ընդգրկում էր որբերին անհրաժեշտ բոլոր համալիր հաստատությունները՝ վարժարան, հիվանդանոց, հանդերձարան, ճաշարան։ Բարեգործականի տարեկան հաշվետվություններից երեւում է, որ որբերին խնամելու համար կառույցն արել է ամենայն հնարավորը՝ «անոնց խաթարուած բարոյականին, մաքրութեան եւ սննդառութեան համար ոչինչ չխնայել, հանդերձեղէն, անկողին եւ այլ նախնական պէտքերը հայթայթել»[35]։ Պորտ Սայիդի որբանոցի եւ «Սիսուան» վարժարանի որբերի կրթության հարցերը կազմակերպելու համար ՀԲՄ կենտրոնական վարչական ժողովը 1918 թ. հոկտեմբերի սկզբին[36] կազմում է ՀԲՄ կրթական եւ որբախնամ հանձնախումբը՝ եգիպտահայ թեմի առաջնորդ Թորգոմ եպիսկոպոս Գուշակեանի նախագահությամբ։ 1918–1919 թթ. ընկած ժամանակահատվածում[37] ՀԲՄ Պորտ Սայիդի որբանոցի համար ծախսել է շուրջ 8933 եգիպտական ոսկի[38]։

Որբանոցից բացի՝ ՀԲՄ-ի կարեւոր նախաձեռնություններից էր Պորտ Սայիդի այրիանոց-ապաստարանը, որտեղ հավաքված գաղթականները հիմնականում Միջագետքի անապատներից Պորտ Սայիդի վրանաքաղաք գաղթած թշվառ այրիներ ու աղջիկներ էին՝ «թուրք դահիճներուն ձեռքէն

---

[35] *«Տե՛ս Հայկական Բարեգործական Ընդհ. Միութիւն, հաշուեկշիռ եւ տեղեկագիր...», էջ 112։*

[36] *ՀԲՄ-ի կրթական եւ որբախնամ հանձնախմբի առաջին նիստը գումարվում է 1918 թ. հոկտեմբերի 18-ին։*

[37] *1919 թ. նոյեմբերից սկսած՝ Պորտ Սայիդի գաղթականները, ստանալով Ֆրանսիայի հովանավորությունը, վերադարձան Կիլիկիա։ Գաղթականների հետ Կիլիկիա (Մերսին) փոխադրվեց նաեւ Պորտ Սայիդի որբանոցը՝ ավելի քան 300 որբերով, որտեղ ՀԲՄ-ի ջանքերով պետք է նոր որբանոց կառուցվեր։*

[38] *Տե՛ս «Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան...», էջ 53։*

խլուած»[39], որտեղ նրանք արհեստ սովորեցին եւ սկսեցին աշխատել՝ հոգալով իրենց կեցությունը։

Հարկ է նշել, որ Պողոս Նուբարը, ներկայանալով ոչ միայն որպես ՀԲԸՄ, այլ նաեւ Ազգային պատվիրակության նախագահ, իր հեղինակությունն ու կապերն օգտագործում էր ոչ միայն Հայկական հարցի արդարացի լուծման համար, այլ նաեւ ի սեր հայ որբերի եւ գաղթականների՝ որպես ցեղասպանության անմիջական հետեւանքների բարօրության ու փրկության գործի։ Քանի որ զինադադարից հետո անհետաձգելի էր Միջագետքում ապաստանած հայ որբերի ու գաղթականության ազատագրման հարցը, ուստի Պողոս Նուբարը տեսակցություն է ունենում Հիջազի թագաժառանգ Էմիր Ֆեյսալի հետ՝ խնդրելով միջոցներ ձեռնարկել Միջագետքում ապաստանած հայ գաղթականության կացության բարելավման ուղղությամբ։ Այդ տեսակցության արդյունքում Պողոս Նուբարը ոչ միայն 20 հազար ոսկի արժողությամբ գումար օգնություն է ուղարկում Սիրիայի հայ գաղթականներին, այլ նաեւ թագաժառանգի անմիջական հրահանգով Սիրիայի ընդհանուր հրամանատար Ալի Ռիզան պետք է «ամեն կարելի դիւրութիւն ընծայէ եւ անհրաժեշտ միջոցները ձեռք առնէ, բարելաւելու հայ տարագիրներու կացութիւնը, ինչպէս նաեւ մասնաւոր քննութիւն մը կատարէ, թէ որ արաբներուն եւ աշիրէթներուն քով հայ կիներ կամ աղջիկներ եւ կամ որբեր կը գտնուին»[40]։

1915–1918 թթ. ընթացքում ՀԲԸՄ իր գործունեությունը, ըստ էության, կենտրոնացրեց արեւմտահայության թշվառ բեկորների մարմնավոր ու բարոյահոգեբանական վերակառուցման ուղղությամբ։ Նրա գործունեությունն ուղղված էր ոչ միայն որբերի ու գաղթականների նյութական վերականգնմանը, այլ նաեւ արեւմտահայ գաղթականության հոգեւոր ու մշակութային վերածննդին՝ նոր ու ամուր հիմքերի վրա դնելով վերջիններիս նոր միջավայրում ներգրավվածությանը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով նշենք, որ ՀԲԸՄ ձեռնամուխ եղավ արեւմտահայ գաղթականության համար մթերքի, դեղորայքի, վրանների ապահովման ու հի-

---

[39] Տե՛ս «Հայկական Բարեգործական Ընդհ. Միութիւն, հաշուեկշիռ եւ տեղեկագիր...», էջ 122–123։

[40] Տե՛ս «Ժողովուրդի ձայնը», Կ. Պոլիս, 1919, յունուար, թիւ 21–80։

վանդանոցների կազմակերպման աշխատանքներին՝ իր գործունեության ամենակարեւոր ուղղությունը դարձնելով որբախնամությանը։ Ապաստարանով ու սննդով ապահովելուց զատ, ՀԲԸՄ մեծ դեր խաղաց կրթական ու առողջապահական ծրագրերի իրականացման գործում՝ առանձնակի ուշադրություն դարձնելով որբ երեխաների կրթությանը։ Նա ստեղծեց կրթական հաստատություններ, որոնք ուսուցանում էին հայ երեխաներին այնպիսի հիմունքներով, որոնց շնորհիվ կարելի էր ապահովել նրանց մշակութային ու ազգային ժառանգության պահպանումը։

Վերլուծելով 1915–1918 թթ. ընթացքում ՀԲԸՄ գործունեությունը, կարելի է փաստել, որ կազմակերպությունը չէր սահմանափակվում միայն նյութական աջակցության տրամադրմամբ, այլեւ դրան զուգահեռ հոգեբանական մեծ աշխատանք էր կատարում հոգեպես ճնշված գաղթականության շրջանում՝ փորձելով վերականգնել ցեղասպանություն վերապրած հայրենազուրկ արեւմտահայության հույսն ու հավատը ապագայի նկատմամբ։ ՀԲԸՄ խոր գիտակցություն ու ռազմավարություն դրսեւորեց՝ զբաղվելով ոչ միայն արեւմտահայ գաղթականության փրկության գործով, այլեւ դարձավ մի կառույց, որը փորձեց վերականգնել հայ մշակույթը, սերունդների շարունակականությունը եւ ազգային ինքնությունը, որոնք վտանգվել էին ցեղասպանության հետեւանքով։ Անուրանալի են ցեղասպանության ընթացքում եւ դրանից հետո ՀԲԸՄ մատուցած ծառայությունները՝ սովահար ու անապաստան հայ որբերին ու գաղթականներին նաեւ անվտանգ միջավայրի ապահովման տեսանկյունից, որը հնարավորություն կտար նրանց վերականգնել ու շարունակել հայ ազգային արժեքների տարածումը եւ նպաստել հայ ժողովրդի վերածննդին։ Դրանով պայմանավորված՝ ՀԲԸՄ գործունեությունն ուղղված էր ոչ միայն որբերին ու գաղթականներին վերահաս կործանումից փրկելուն, նրանց նյութական կարիքները բավարարելուն, այլ նաեւ արեւմտահայության բեկորների հոգեւոր ու մշակութային վերածննդին՝ նոր ու ամուր հիմքերի վրա դնելով վերջիններիս՝ նոր միջավայրում ներգրավվածությունը։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

ՀԲԸՄ, Հայոց ցեղասպանություն, Արեւմտյան Հայաստան, գաղթականներ, Պորտ Սայիդ, որբանոց, Պողոս Նուբար։

РЕЗЮМЕ

Геноцидальная политика, осуществляемая Османским режимом в начале XX века, привела к разрушительным последствиям для западных армян. В этих условиях Всеармянский благотворительный союз (ВБС) сыграл ключевую роль в оказании всесторонней помощи беженцам и сиротам, пережившим катастрофу. В 1915–1918 гг. Каирское отделение АГБУ организовало масштабную гуманитарную деятельность, направленную на обеспечение питанием, жильём, медицинским обслуживанием и образованием тысяч армян.

После подписания Мудросского перемирия ВБС расширил свои инициативы, уделяя особое внимание репатриации беженцев, уходу за сиротами, а также освобождению армянских женщин и детей, удерживаемых в мусульманских семьях. Деятельность организации выходила за рамки материальной поддержки, стремясь к духовному и культурному возрождению западноармянской общины. ВБС проводило системную работу по сохранению армянской идентичности, национальных ценностей и обеспечению интеграции уцелевших в новые общественные условия.

SUMMARY

The genocidal policy pursued by the Ottoman regime in the early 20th century had devastating consequences for the Western Armenian population. In response to this humanitarian crisis, the Armenian General Benevolent Union (AGBU) assumed a central role in providing multifaceted support to survivors, particularly refugees and orphans. Between 1915 and 1918, the AGBU Cairo Branch undertook extensive humanitarian initiatives, offering food, shelter, medical aid, and education to thousands of displaced Armenians.

Following the Mudros Armistice, the organization significantly broadened its scope of operations. Particular emphasis was placed on the repatriation of refugees, the care and upbringing of orphaned children, and the rescue of Armenian women and minors held in Muslim households. Beyond addressing material needs, AGBU's mission encompassed the spiritual and cultural rehabilitation of the fragmented Western Armenian community. Through well-coordinated efforts, the organization sought to preserve Armenian cultural identity, promote continuity of national values, and facilitate the integration of survivors into new socio-cultural environments.